

**«Սփեշլ Ֆայնենս» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն**

Ֆինանսական հաշվետվություններ

*2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
Անկախ աուդիտորական եզրակացության հետ միասին*

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն.....	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն.....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն.....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն.....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1.Գործունեության նկարագրություն.....	5
2.Հաշվետվությունների պատրաստման հիմունքները.....	5
3.Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը..	5
4.Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ.....	12
5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ.....	12
6.Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ...	13
7.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	14
8.Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ.....	14
9. Հաճախորդներին տրված վարկեր.....	14
10. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ.....	15
11. Ներգրավված վարկեր և փոխառություններ.....	16
12. Չուտ տոկոսային եկամուտ.....	16
13. Պարտքային կորստի գծով (ծախս)/կորստի վերականգնում.....	17
14. Միջնորդվածների գծով եկամուտ.....	17
14. Այլ ընդհանուր վարչական ծախսեր.....	17
15.Շահութահարկ.....	17
16. Ռիսկերի կառավարում.....	18
17.Գործարքներ կապակցված կողմերի հետ.....	22
18. Ֆինանսական գործիքների իրական արժեքը.....	23
19.Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր.....	24



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Սփեշլ Ֆայնենս» ունիվերսալ վարկային կազմակերպությունն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սփեշլ Ֆայնենս» ունիվերսալ վարկային կազմակերպությունն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Եթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի Եթիկայի միջազգային կանոնագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտները) (ՀԷՄՍ կանոնագիրը), և պահպանել ենք Եթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան ղեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ՖԻՆԱ ԱՈՒՐԻՏ ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան, Պարոնյան 9 բն. 12

Էլ. հասցե՝ info@fins.am

Հեռ.՝ +374 60 525 025



FINS AUDIT CJSC

Address: Yerevan, Paronyan str. 9 h. 12

Email: info@fins.am

Phone: +374 60 525 025

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի որչ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

▶ ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամուտությունը:

▶ Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:

▶ գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«ՖԻՆԱ ԱՈՒՐԻՏ» ՓԲԸ

27 փետրվարի, 2026թ.

ՀՀ, ք. Երևան

Տնօրեն



Արմինե Ավագյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	2,593	200,000
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	8	199,596	-
Հաճախորդներին տրված վարկեր	9	708,969	-
Հիմնական միջոցներ		1,062	-
Օգտագործման իրավունքով ակտիվներ	10	45,869	-
Ոչ նյութական ակտիվներ		5,402	-
Այլ ակտիվներ		6,887	-
		970,378	200,000
Պարտավորություններ			
Ներգրավված վարկեր և փոխառություններ	11	697,132	-
Վարձակալության գծով պարտավորություններ	10	52,410	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր		13,531	-
Ընթացիկ հարկերի գծով ծախս	16	2,275	-
		765,348	-
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	1.2	200,000	200,000
Զբաղիված շահույթ	1.2	5,030	-
		205,030	200,000
		970,378	200,000

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են ընկերության ղեկավարության կողմից՝

Գլխավոր տնօրեն՝
 Գլխավոր հաշվապահ՝

27 փետրվարի, 2026թ.



Մարիամ Առաքելյան
 Աննա Ղուկասյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտներ		86,314	-
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		(40,294)	-
Չուտ տոկոսային եկամուտ	12	46,020	-
Պարտքային կորստի գծով (ծախս)/կորստի վերականգնում	13	(29,997)	-
Չուտ տոկոսային եկամուտ՝ վարկային կորուստների գծով ծախսի վերականգնումից հետո		16,023	-
Միջնորդավճարների գծով եկամուտ	14	78,694	-
Այլ գործառնական եկամուտ		7,821	-
Ոչ տոկոսային եկամուտ		86,515	-
Անձնակազմի գծով ծախսեր		(47,457)	-
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	15	(29,099)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(13,154)	-
Այլ գործառնական ծախսեր		(5,552)	-
Ոչ տոկոսային ծախս		(95,232)	-
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		7,305	-
Շահութահարկի գծով ծախս	16	(2,275)	-
Հաշվետու տարվա շահույթ		5,030	-
Հաշվետու ժամանակաշրջանի ընդամենը համապարփակ եկամուտ		5,030	-

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
2024թ. Նոյեմբերի 25-ի դրությամբ	-	-	-
Կանոնադրական կապիտալի համարում	200,000	-	200,000
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	200,000	-	200,000
Ընդամենը հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ եկամուտ	-	5,030	5,030
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	200,000	5,030	205,030

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2025թ.	2024թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Ստացված տոկոսներ		76,004	-
Վճարված տոկոսներ		(24,874)	-
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ		(200,000)	-
Չուտ (վճարված)/ստացված միջնորդավճարներ		83,021	-
Անձնակազմի գծով ծախսերի վճարումներ		(33,140)	-
Վճարված հարկեր		(13,277)	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսք նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		(112,266)	-
Տեղաբաշխված միջոցների նվազում (ավելացում)		(726,931)	
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից		(45,309)	
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(884,506)	
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(9,114)	
Չուտ դրամական միջոցներ՝ ստացված ներդրումային գործունեությունից		(9,114)	
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Կանոնադրական կապիտալի համալրում		-	200,000
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)		326,313	
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		369,900	
Չուտ դրամական միջոցների հոսքեր՝ ֆինանսավորման գործունեությունից		696,213	200,000
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ զուտ աճ/(նվազում)		(197,407)	200,000
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվետու տարվա սկզբում	10	200,000	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքները հաշվետու տարվա վերջում	10	2,593	200,000

(հազար ՀՀ դրամ)

1. Գործունեության նկարագրություն

«Սփեշլ Ֆայնենս» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հիմնադրվել է 2024թ. հուլիսի 8-ին: Ընկերությունը գրանցվել է 2024թ. Դեկտեմբերի 24-ին ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N 59 գրանցման համարով:

Ընկերության 55% բաժնետերը առ 31 դեկտեմբերի 2025թ. հադիսանում է Սահակյան Մամվելը իսկ մնացած 45% բաժնեմասերը 15% մասսաբաժնով բաժանված են հաջորդիվ անձանց միջև՝ Սահակյան Բնարիկ, Սահակյան Զրիստինե, Սահակյան Սամվել:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Բաջազևուհու փողոց 5 շենք, 26 շինություն:

Ընկերության հիմնական գործունեությունը միկրո և միջին չափի վարկերի տրամադրում է անհատներին սպառողական նպատակների համար Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ):

1.2 Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 200,000 հազար ՀՀ դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես): Այն բաղկացած է 4 հատ բաժնեմասերից, որոնցից մեկի անվանական արժեքները կազմում է՝ 110,000 հազար ՀՀ դրամ, իսկ մնացած երեքը՝ յուրաքանչյուրը 30,000 հազար ՀՀ դրամ:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են մասնակիցների միջև և ամբողջությամբ վճարված են:

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

Ընկերությունը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (ՀՀ դրամ), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել:

Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղչում է ճշգրիտ մինչև՝

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Եկամուտների և ծախսերի ճանաչում (շարունակություն)

- ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը կամ
- ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը:

Ֆինանսական գործիքների, բացառությամբ գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ակտիվների, արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է ապագա դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն առանց հաշվի առնելու սպասվող պարտքային վնասը: Գնված կամ սկզբնավորված պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվների համար հաշվարկվում է պարքային ռիսկով ճշգրտված արդյունավետ տոկոսադրույք՝ կիրառելով ապագա դրամական միջոցների հոսքերը՝ ներառյալ սպասվող պարտքային վնասը:

Արդյունավետ տոկոսադրույքի հաշվարկը ներառում է գործարքի հետ կապված ծախսումները և վճարված կամ ստացված բոլոր այն գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մասը: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են այն լրացուցիչ ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ամորտիզացված արժեք և համախառն հաշվեկշռային արժեք

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության գծով կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, և ֆինանսական ակտիվների համար՝ ճշգրտված սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով: Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է ֆինանսական ակտիվի ամորտիզացված արժեքը՝ նախքան սպասվող պարտքային վնասի գծով պահուստի մասով ճշգրտումը:

Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկ

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման ժամանակ: Տոկոսային եկամուտների և ծախսերի հաշվարկման ժամանակ արդյունավետ տոկոսադրույքը կիրառվում է ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքի (երբ ակտիվը վարկային առումով արժեզրկված չէ) կամ պարտավորության ամորտիզացված արժեքի նկատմամբ: Արդյունավետ տոկոսադրույքը վերանայվում է լրացող տոկոսադրույքով գործիքների դրամական միջոցների հոսքերի պարբերական վերագնահատման արդյունքում՝ շուկայական տոկոսադրույքների շարժումներն արտացոլելու համար:

Այնուամենայնիվ, սկզբնական ճանաչումից հետո արժեզրկված ֆինանսական ակտիվների համար տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույք ֆինանսական ակտիվի զուտ ամորտիզացված արժեքի նկատմամբ: Եթե ակտիվը այլևս արժեզրկված չէ, ապա տոկոսային եկամուտը հաշվարկվում է համախառն հիմունքով:

Սկզբնական ճանաչման ժամանակ արժեզրկված ֆինանսական ակտիվների գծով տոկոսային եկամուտը հաշվարկվում է՝ ճշգրտված արդյունավետ տոկոսադրույքը կիրառելով ակտիվի ամորտիզացված արժեքի նկատմամբ: Տոկոսային եկամուտը չի հաշվարկվում համախառն հիմունքով, նույնիսկ եթե ակտիվի պարտքային ռիսկը բարելավվում է:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ներկայացում

Տոկոսային եկամուտը, որը հաշվարկվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական հաշվետվությունում ներկայացված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ, ներառում է ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվների գծով տոկոսները:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացված տոկոսային ծախսերը ներառում են ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները:

Արտարժույթային գործառնություններ

Արտարժույթով գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը իրենից ներկայացնում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի, և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

Պատմական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 1 ԱՄՆ դոլարի համար հայտարարված փոխարժեքը կազմում էր 381.36 ՀՀ դրամ (2024թ.՝ 396.56 ՀՀ դրամ), 1 եվրոյի համար՝ 449.01 ՀՀ դրամ (2024թ.՝ 413.89 ՀՀ դրամ), 1 Ռուսական ռուբլու համար՝ 4.8711 ՀՀ դրամ (2024թ.՝ 3.71 ՀՀ դրամ):

Ճահուլթահարկ

Ճահուլթահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման/ (փոխհատուցման) ենթակա շահուլթահարկի գումարն է: Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում է տվյալ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային կորուստի հետագա տարիներ փոխանցմամբ:

Ժամանակավոր տարբերությունների հետևանքով առաջացած հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվեկշռային մեթոդով, հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար օգտագործված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակներով օգտագործված գումարների (հարկային բազայի) միջև ժամանակավոր տարբերությունների վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ

Սկզբնական ճանաչում և չափում

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական ակտիվը դասակարգում է որպես ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Ֆինանսական ակտիվը չափվում է ամորտիզացված արժեքով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է պահել ակտիվը պայմանագրային դրամական հոսքեր հավաքելու համար և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Պարտքային գործիքը չափվում է իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով, եթե այն բավարարում է ստորև ներկայացված երկու պայմանները և նախորոշված չէ որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող.

- ակտիվը պահվում է այնպիսի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն իրագործվում է թե՛ պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու և թե՛ ֆինանսական ակտիվները վաճառելու միջոցով և
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ են:

Մյուս բոլոր ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Բացի այդ, սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել ֆինանսական ակտիվը, որն այնպես բավարարում է ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվելու պահանջները, որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե դա կվերացնի կամ էականորեն կվազեցնի հաշվառման անհամապատասխանությունը, որը հակառակ դեպքում կառաջանար:

Վերադասակարգում

Ֆինանսական ակտիվները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը փոխում է ֆինանսական ակտիվների կառավարման իր բիզնես մոդելը:

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ ֆինանսական երաշխավորությունների և փոխատվության հանձնառությունների, դասում է ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների դասին:

Վերադասակարգում

Ֆինանսական պարտավորությունները չեն վերադասակարգվում սկզբնական ճանաչումից հետո:

Այլաճանաչում

Ընկերության ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները և տրամադրված փոխառությունները:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ

- ▶ ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ▶ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ, փոխանցման համաձայնագրի համաձայն, ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման, և ա) Ընկերությունը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ բ) Ընկերությունը չի փոխանցել կամ պահպանել, ըստ էության, ակտիվի բոլոր ռիսկերն ու հատույցները, բայց փոխանցել է ակտիվի հսկողությունը:

Երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ռիսկերն ու հատույցները: Երբ Ընկերությունը ո՛չ փոխանցել է, ո՛չ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի հսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Ընկերությունը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափվում են այն հիմքով, որը արտացոլում է Ընկերության պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափվում է ակտիվի սկզբնական հաշվեկշռայի արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը Ընկերությունից կարող է պահանջվել մարել:

Արժեզրկում

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ակնկալվող պարտքային կորուստների գծով պարտքային գործիքներ հանդիսացող և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների համար:

Ընկերությունը կորստի պահուստը չափում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով, բացառությամբ այլ ֆինանսական գործիքների, որոնց գծով պարտքային ռիսկը նշանակալիորեն չի աճել սկզբնական ճանաչումից ի վեր, որոնց համար վնասի գծով պահուստը չափվում է 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են ակնկալվող պարտքային կորուստների այն մասը, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 1-ին փուլի ֆինանսական գործիքներ:

Ամբողջ ժամկետում պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են այն ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում: Ֆինանսական գործիքները, որոնց գծով ճանաչվում են ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներ, դիտարկվում են որպես 2-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե պարտքային ռիսկը նշանակալիորեն աճել է սկզբնական ճանաչումից ի վեր, բայց ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված չեն) և 3-րդ փուլի ֆինանսական գործիքներ (եթե ֆինանսական գործիքները պարտքային առումով արժեզրկված են):

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական ակտիվներ (շարունակություն)

Ընկերությունը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 90 օրից ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Ընկերությունը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Ընկերությունը մինչև Ընկերության կողմից պահվող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամբողջությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք, և սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, եթե 1 տարուց ավել ժամկետանց է և ենթակա չէ հարկադրված գործողության:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական ակտիվները արժեզրկված են, թե՛ ոչ: Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք ունեցել են բացասական ազդեցություն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Հիմնական միջոցներ

(i) Ճանաչում և չափում

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է կյուլթերի արժեքը և ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսերը, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, գտնվելու տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսերը: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, ապա այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ, և ճանաչվում է զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հողվածում շահույթում կամ վնասում:

(ii) Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցիչ փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերությունը կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Հիմնական միջոցներ (շարունակություն)

(iii) Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար.

Շենքեր – 10-ից 100 տարի

Մեքենաներ և սարքավորումներ – 1-ից 5 տարի

Արտադրական գույք – 1-ից 8 տարի

Այլ հիմնական միջոցներ – 1-ից 8 տարի

Վարձակալվող գույքի բարելավումներ – Վարձակալության ժամկետի և ակտիվի օգտակար ծառայության ժամկետի նվազագույնը

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է գծային հիմունքով գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով:

Եթե վարձակալական ժամկետի վերջում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է Ընկերությանը կամ դրա արժեքն արտացոլում է գնման օպցիոնի իրագործումը, մաշվածությունը հաշվարկում է օգտագործելով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները ներառում են հաստատուն վճարումները (ներառյալ ըստ Էուլյան հաստատուն վճարումները)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումները, վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից և գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը:

(հազար ՀՀ դրամ)

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)

Փոփոխուն վարձավճարները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կատարվել են պաշարների ստացման նպատակով):

Վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Ընկերությունը օգտագործում է վարձակալության մեկնարկի ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները

արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, վարձավճարների փոփոխություն (օր.՝ ապագա վճարումների փոփոխություն պայմանավորված այդ վարձավճարները որոշելու համար օգտագործված ինդեքսի կամ դրույքի փոփոխությամբ) կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղջման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2025թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ստանդարտի փոփոխությունը՝ կապված «Փոխանակելիության բացակայության» հետ առաջին անգամ կիրառվել է 2025թ., որը սահմանում է պահանջներ՝ գնահատելու, թե երբ է արժույթը փոխարկելի այլ արժույթի նկատմամբ, և երբ՝ ոչ: Ստանդարտի այս փոփոխության ընդունումը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- «Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ» (ՀՀՄՍ 9 և ՀՀՄՍ 7 փոփոխություններ)
- ՀՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

(հազար ՀՀ դրամ)

6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ կատարած դատողությունների, գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է ստորև.

- Ֆինանսական ակտիվների դասակարգում. այն բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակներում պահվում են ակտիվները և պայմանագրային դրույթների գնահատումը, որոշելու համար, թե արդյո՞ք որոշակի ամսաթվերին առաջացող դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի գծով հաշվարկված տոկոսների վճարումներ
- Ֆինանսական գործիքների արժեզրկում. գնահատում, թե արդյո՞ք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկն էականորեն աճել է սկզբնական ճանաչումից հետո, և սպասվելիք պարտքային վնասի չափման համար օգտագործվող մոդելների ընտրություն և հաստատում:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում.

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտարկելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտարկելի («իրական արժեքի հիերարխիա»).

- Մակարդակ 1-Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված);
 - Մակարդակ 2-Ուղղակի կամ անուղղակիորեն դիտարկելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1- ին մակարդակում ներառվող գնանշվող գներից;
 - Մակարդակ 3-Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա):
- Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

(հազար ՀՀ դրամ)

7. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ներառում են՝

	Արժույթ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ՀՀ դրամ	2,593	200,000
Ընդամենը		2,593	200,000

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նույնպես) Ընկերության դրամական միջոցները տեղաբաշխված են ՀՀ վստահելի առևտրային բանկերում: Դրամական միջոցների և դրանց համարժեքների բոլոր մնացորդները դասակարգված են Փուլ 1-ում:

8. Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ

Ֆինանսական հաստատությունների նկատմամբ պահանջները ներառում են՝

	2025թ.	2024թ.
90 օրից ավել ժամկետային ավանդներ	201,708	-
Նվազեցում ԱՊԿ	(2,112)	-
Ընդամենը	199,596	-

Ֆինանսական հաստատությունների նկատմամբ պահանջների համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՎԿ փոփոխության վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է՝

Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	Փուլ 1	Ընդամենը
Համախառն հաշվեկշռային արժեք 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	201,708	201,708
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	201,708	201,708

Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	Փուլ 1	Ընդամենը
ԱՎԿ պահուստ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Ստեղծված կամ ձեռք բերված նոր ակտիվներ	2,112	2,112
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,112	2,112

9. Հաճախորդներին տրված վարկեր

Հաճախորդներին տրված վարկերը ներառում են՝

	2025թ.	2024թ.
Գրավով ապահովված վարկեր	736,854	-
Գրավով ապահովված վարկերի գծով ԱՊԿ	(27,885)	-
Հաճախորդներին տրված՝ ամորտիզացված արժեքով չափվող զուտ վարկեր	708,969	-

Ընկերության վարկային պորտֆելը բաղկացած է բացառապես գրավով ապահովված վարկերից որոնք տրամադրվել են բացառապես ֆիզիկական անձնաց:

(հազար ՀՀ դրամ)

9. Հաճախորդներին տրված վարկեր (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող հաճախորդներին տրված վարկերի ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստ

Հաճախորդներին տրված վարկերի համախառն հաշվեկշռային արժեքի և համապատասխան ԱՊԿ փոփոխությունների վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է՝

Հաճախորդներին տրված վարկեր գրավով ապահովված

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Հաճախորդներին տրված վարկեր գրավով ապահովված	-	-	-	-
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(16,805)	16,805	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(1,617)	-	1,617	-
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվներ	1,302,746	-	-	1,302,746
Մարված դեբիտորական պարտքերի հակադարձ արժեզրկում	(565,892)	-	-	(565,892)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	718,432	16,805	1,617	736,854

Հաճախորդներին տրված վարկեր գրավով ապահովված

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
ԱՊԿ 2025թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-
Տեղափոխում 1-ին փուլ	-	-	-	-
Տեղափոխում 2-րդ փուլ	(4,201)	4,201	-	-
Տեղափոխում 3-րդ փուլ	(821)	-	821	-
Սկզբնավորված նոր ֆինանսական ակտիվներ	48,165	-	-	48,165
Մարված դեբիտորական պարտքերի հակադարձ արժեզրկում	(20,280)	-	-	(20,280)
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	22,863	4,201	821	27,885

10. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ

	Շենքեր և շինություններ
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	-
Ավելացումներ	56,801
Մաշվածության գծով ծախս	(10,933)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2025թ.	45,869

(հազար ՀՀ դրամ)

10. Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)

	Պարտավորություններ վարձակալության գծով
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-
Ավելացումներ	56,801
Տոկոսային ծախս	6,096
Վարձակալական վճարումներ	(10,487)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	52,410

11. Ներգրավված վարկեր և փոխառություններ

Ընթացիկ պարտավորություններ	2025թ.	2024թ.
Գրավով ապահովված բանկային վարկեր	327,232	-
Կապակցված կողմերից փոխառություններ	369,900	-
Ընդամենը	697,132	-

Բանկային վարկերն ունեն 3 տարի մարման ժամկետ և տարեկան 11.5% միջին:

Կապակցված կողմերից փոխառությունները ունեն 3 տարի մարման ժամկետ և տարեկան 12.25% միջին տոկոսադրույք:

Ընկերության տոկոսային և արտարժույթային ռիսկերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է Ծան. 16-ում:

12. Չուտ տոկոսային եկամուտ

Չուտ տոկոսային եկամուտը ներառում է՝

	2025թ.	2024թ.
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկերից տոկոսային եկամուտ	64,932	-
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներից տոկոսային եկամուտ	21,382	-
Ընդամենը տոկոսային եկամուտ	86,314	-
Ստացված փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	(34,198)	-
Վարձակալության գծով տոկոսային ծախսեր	(6,096)	-
Ընդամենը տոկոսային ծախս	(40,294)	-
Չուտ տոկոսային եկամուտ	46,020	-

13. Միջնորդավճարների գծով եկամուտ

Ընկերության միջնորդավճարներից եկամուտը ներառում է վարկերի սպասարկումից ստացված եկամուտները: 2025 թվականի ընթացքում ընկերության միջնորդավճարներից եկամուտը կազմել է 78,694 հազար ՀՀ դրամ (2024թ. Ընթացքում՝ զրո ՀՀ դրամ):

(հազար ՀՀ դրամ)

14. Պարտքային կորստի գծով (ծախս)/կորստի վերականգնում

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված ֆինանսական գործիքների վարկային կորստի գծով (ծախսը)/կորստի վերականգնումը:

	Փուլ 1	Փուլ 2	Փուլ 3	Ընդամենը
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	2,112	-	-	2,112
Հաճախորդներին տրված վարկեր	22,775	4,289	821	27,885
Ընդամենը պարտքային կորուստների գծով ծախսի վերականգնում	24,887	4,289	821	29,997

15. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

	2025թ.	2024թ.
Կարճաժամկետ վարձակալության գծով ծախսեր	10,796	-
Շահութահարկից բացի այլ հարկեր	7,369	-
Վճարումներ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակին	3,193	-
Խորհրդատվական և այլ ծառայություններ	2,500	-
Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	1,735	-
Հաղորդակցություն	1,186	-
Գրասենյակային ծախսեր	1,036	-
Այլ ծախսեր	1,284	-
Ընդամենը	29,099	-

16. Շահութահարկ

Հաշվետու տարվա համար ՀՀ Հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2024թ.-18%):

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2025թ.	2024թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	2,275	-
Հետաձգված հարկերի գծով ժամանակավոր տարբերությունների առաջացում և վերականգնում	-	-
Շահութահարկի գծով ծախս	2,275	-

(հազար ՀՀ դրամ)

15. Շահութահարկ (շարունակություն)

Շահութահարկի արդյունավետ տոկոսադրույքի համադրում

	2025թ.		2024թ.	
	հազ. դրամ	%	հազ. դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	7,305		-	
Շահութահարկ սահմանված դրույքաչափով	1,315	18	-	18
Այլ չնվազեցվող ծախսերի/(չհարկվող եկամուտների) հարկային հետևանքը, զուտ	960	13	-	-
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների փոփոխություն	-	0	-	-
Շահութահարկի գծով ծախսը և արդյունավետ տոկոսադրույքը	2,275	31	-	-

17. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը խմբի բիզնեսի հիմնարար տարրերից է և խմբի գործունեության էական բաղկացուցիչը: Խմբի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերն են՝

- Պարտքային ռիսկը
- Իրացվելիության ռիսկը
- Շուկայական ռիսկը

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ընկերության ռիսկի կառավարման քաղաքականության նպատակն է ախտորոշել և վերլուծել ռիսկերը, սահմանել ռիսկի համապատասխան սահմանաչափեր և հսկողություն, և արժանահավատ և նորացված տեղեկատվական համակարգերի միջոցով վերահսկել ռիսկերը և սահմանաչափերի պահպանումը: Ընկերությունը պարբերաբար վերանայում է ռիսկի կառավարման քաղաքականությունը և համակարգերը՝ շուկայում, ապրանքներում փոփոխություններն արտացոլելու և լավագույն փորձին հետևելու համար:

Մասնակիցների ընդհանուր ժողովը ընդհանուր պատասխանատվություն է կրում ռիսկերի կառավարման շրջանակի վերահսկման, հիմնական ռիսկերի կառավարումը վերահսկելու և ռիսկերի կառավարման քաղաքականության և ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև զգալիորեն մեծ ռիսկերի հաստատման համար:

Ընկերության ղեկավարություն պատասխանատու է ռիսկերի նվազեցման միջոցառումների մոնիտորինգի ու իրականացման և ապահովելու համար, որ Ընկերությունը գործում է ռիսկի սահմանված պարամետրերի շրջանակներում:

Ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ռիսկի գործոնները բացահայտվում և կառավարվում են ողջ Ընկերության շրջանում: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ռիսկի գործոնների ամբողջ շրջանակի բացահայտմանը և ռիսկի նվազեցման ընթացիկ ընթացակարգերի նկատմամբ վստահության մակարդակի որոշմանը:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(հազար ՀՀ դրամ)

17. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկ (շարունակություն)

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Հաճախորդներին տրված վարկեր
- Դրամական միջոցների և դրանց համարժեքներ
- Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ
- Ներգրավված վարկեր և փոխառություններ
- Վարձակալության գծով պարտավորություն
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ հաճախորդը կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմը չի կատարում իր պայմանագրային պարտականությունները: Ընկերությունում գործում են պարտքային ռիսկին ենթարկվածությունը կառավարող քաղաքականություն և ընթացակարգեր (թե՛ ճանաչված ֆինանսական ակտիվների և թե՛ չճանաչված պայմանագրային հանձնառությունների համար): Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունը սահմանում է՝

- վարկային դիմումների ուսումնասիրման և հաստատման ընթացակարգերը,
- վարկառուների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը
- պայմանագրային կողմերի, թողարկողների և ապահովագրական ընկերությունների վճարունակության գնահատման մեթոդաբանությունը,
- գրավի գնահատման մեթոդաբանությունը
- վարկերի փաստաթղթավորման պահանջները
- վարկերի և այլ գործիքների, որոնց գծով Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, շարունակական հսկողության ընթացակարգերը:

Պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը, որպես կանոն, արտացոլվում է ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և չճանաչված պայմանագրային հանձնառությունների գումարներում: Ակտիվների և պարտավորությունների հնարավոր հաշվանցումն էական ազդեցություն չունի պոտենցիալ վարկային ռիսկի նվազեցման վրա:

Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ընկերության պարտքային ռիսկի առավելագույն չափը զգալիորեն տատանվում է և կախված է ինչպես անհատական ռիսկերից, այնպես էլ ընդհանուր շուկայական տնտեսության ռիսկերից:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկի առավելագույն չափը հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով: Հաշվեկշռային ֆինանսական ակտիվների գծով առավելագույն ռիսկը հավասար է այդ ակտիվների հաշվեկշռային արժեքին՝ նախքան որևէ հաշվանցում կամ գրավի ազդեցություն հաշվի առնելը:

(հազար ՀՀ դրամ)

17. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Պարտքային ռիսկի առավելագույն չափը (շարունակություն)

	2025թ.	2024թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,593	200,000
Հաճախորդներին տրված վարկեր	708,969	-
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	199,596	-
Շահութահարկի գծով ծախս	911,158	200,000

Վերոնշյալ հաշվեկշռային արժեքները լավագույնս ներկայացնում են վարկային ռիսկի առավելագույն չափը, երբ հաշվի է առնվում պահվող գրավի ապահովման միջոցի կամ ձեռք բերված անձնական երաշխավորությունը: Վարկային ռիսկի չափի նվազեցման նպատակով ակտիվների և պարտավորությունների հնարավոր գուտազման ազդեցությունը էական չէ: Հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց գրավի ապահովման միջոցի և հաճախորդներին տրամադրված վարկերի գծով վարկային ռիսկի կենտրոնացման վերլուծությունը ներկայացվում է Ծան. 9-ում:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պարտապաններ կամ կապակցված պարտապանների խմբեր (2024թ-ին նման պարտապաններ չկային), որոնց հետ կապված պարտքային ռիսկին ենթարկվածությունը գերազանցում է պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածության 10%-ը:

Աշխարհագրական ռիսկի կենտրոնացումը

Ընկերության ակտիվների և պարտավորությունների աշխարհագրական կենտրոնացումը սահմանափակվում է Հայաստանի Հանրապետության տարածքով:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության ռիսկն առաջանում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության և տոկոսադրույքների համապատասխանությունը և/կամ վերահսկվող անհամապատասխանությունը հանդիսանում է իրացվելիության կառավարման հիմնարար գործոն:

Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական հոսքերի հետ կապված պարտականությունները սահմանված ժամկետներում կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է դեկավարության կողմից:

Ֆինանսական պարտավորությունների և ակտիվների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական պարտավորությունների և ակտիվների բաշխումը՝ մինչև մարումը մնացած ժամկետների՝ պայմանագրային չգեղջված գումարների հիման վրա: Պարտավորությունները և ակտիվները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով:

(հազար ՀՀ դրամ)

17. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Իրացվելիության ռիսկ (շարունակություն)

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-6 ամիս	6-12 ամիս	Ավելի քան 1 տարի	Ընդամենը
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ֆինանսական ակտիվներ					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,593	-	-	-	2,593
Հաճախորդներին տրված վարկեր	-	708,969	-	-	708,969
Պահանջներ ֆինանսական հաստատությունների նկատմամբ	-	-	-	199,596	199,596
Ընդամենը Ֆինանսական ակտիվներ	2,593	708,969	-	199,596	911,158
Ֆինանսական պարտավորություններ Ներգրավված վարկեր և փոխառություններ (Ծան. 11)	(327,232)	-	-	(369,900)	(697,132)
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծան. 10)	-	(4,338)	(5,425)	(42,647)	(52,510)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	(13,531)	-	-	(13,531)
Ընթացիկ հարկերի գծով ծախս	-	(2,275)	-	-	(2,275)
Ընդամենը Ֆինանսական պարտավորություններ	(327,232)	(20,144)	(5,425)	(412,547)	(765,348)
Զուտ դիրք	(324,639)	688,825	(5,425)	(212,951)	145,810

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխությունների հետևանքով: Շուկայական ռիսկը ներառում է արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսակիր և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձնահատուկ փոփոխությունների ազդեցությանը և շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների փոփոխականության մակարդակի փոփոխություններին: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է կառավարել և հսկել շուկայական ռիսկին ենթարկվածությունը և պահպանել այն ընդունելի սահմանաչափերում միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(հազար ՀՀ դրամ)

17. Ռիսկերի կառավարում (շարունակություն)

Շուկայական ռիսկ (շարունակություն)

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների հետևանքով: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական հոսքերի վրա շուկայում գերակշռող տոկոսադրույքների տատանումների ազդեցությանը: Նման տատանումները կարող են ավելացնել տոկոսային մարժան, սակայն կարող են նաև նվազեցնել այն կամ հանգեցնել կորուստների՝ տոկոսադրույքների անսպասելի փոփոխությունների դեպքում:

Միջին արդյունավետ տոկոսադրույք

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են տոկոսակիր ակտիվների և պարտավորությունների միջին արդյունավետ տոկոսադրույքները 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են այս ակտիվների և պարտավորությունների միջև մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	Միջին արդյունավետ Տոկոսադրույք 2025թ.	Միջին արդյունավետ Տոկոսադրույք 2024թ.
Տոկոսակիր ակտիվներ		
Հաճախորդներին տրված վարկեր	70.68	-
Տոկոսակիր պարտավորություններ		
Գրավով ապահովված փոխառություն մասնակցից	10.5	-
Գրավով ապահովված վարկեր տեղական բանկերից	12.5	-

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: Ընկերությունը չի ենթարկվում արտարժույթային ռիսկի քանի որ չի իրականացնում արտարժույթային գործառնություններ:

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության բաժնետերերի մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Ընկերությունը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

(հազար ՀՀ դրամ)

18. Գործարքներ կապակցված կողմերի հետ (շարունակություն)

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար անձնակազմի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը ղեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 ղեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2024թ.	2023թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ	9,073	-	-	-
	9,073	-	-	-

Գործարքներ բաժնետերերի հետ

Ստորև ներկայացված են բաժնետերերի հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը ղեկտեմբեր 31-ի ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 ղեկտեմբերի	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Կանոնադրական կապիտալի համալրում	-	200,000	-	-
Ստացված փոխառություններ (Չուև)	(369,900)	-	(369,900)	-
Վարձավճարներ	11,589	-	-	-

19. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Իրական արժեքի չափման գործընթացներ

Իրական արժեքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտման նպատակով Ընկերությունն առանձնացրել է ակտիվների և պարտավորությունների դասեր՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների բնույթի, առանձնահատկությունների և ռիսկերի, ինչպես նաև իրական արժեքի հիերարխիայի վրա:

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են:

Ընկերությունը ֆինանսական գործիքների իրական արժեքը չափելիս կիրառում է ստորև ներկայացված իրական արժեքի հիերարխիան, որն արտացոլում է չափումների ժամանակ օգտագործված ելակետային տվյալների նշանակալիությունը.

- 1-ին մակարդակ. նույն գործիքների համար գործող շուկայում գնանշված գները (չճշգրտված):
- 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշված գներից տարբեր ելակետային տվյալները, որոնք դիտելի են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գներից ստացվող): Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնց գնահատման համար կիրառվել են նմանատիպ գործիքների համար գործող շուկայում գնանշված գները, նմանատիպ գործիքների համար գնանշված գներն ակտիվ չհամարվող շուկաներում, կամ գնահատման այլ մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն դիտելի են շուկայական տվյալներից:

(հազար ՀՀ դրամ)

19. Ֆինանսական գործիքների իրական արժեքը (շարունակություն)

- 3-րդ մակարդակ. ոչ դիտելի ելակետային տվյալներ: Այս դասակարգը ներառում է բոլոր այն գործիքները, որոնց դեպքում գնահատման մեթոդները ներառում են դիտելի տվյալների վրա չհիմնված ելակետային տվյալները և ոչ դիտելի ելակետային տվյալները նշանակալի ազդեցություն ունեն գործիքի գնահատման վրա: Այս դասակարգը ներառում է այն գործիքները, որոնք գնահատվում են նմանատիպ գործիքների համար գնանշված գների հիման վրա, որոնց գծով պահանջվում են նշանակալի ոչ դիտելի ճշգրտումներ կամ ենթադրություններ՝ գործիքների միջև տարբերություններն արտացոլելու համար:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Հաճախորդներին վարկերը տրամադրվում են շուկայական տոկոսադրույքներով: Այս վարկերի տոկոսադրույքները նման են Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ ֆինանսական ընկերությունների կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքներին: 2025թ-ին ընկերության կողմից տրամադրված վարկերի արդյունավետ տոկոսադրույքների էական տատանումներ չեն դիտվել:

20. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո իրադարձություններ չեն եղել, որոնք կարող են պահանջել ճշգրտում կամ բացահայտում ընկերության 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններում: